ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 173

20 սեպտեմբեր 2011թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Իրականացվելիք ծրագրին համայնքի ներդրումն ապահովելու նպատակով ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջան համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Գույքի օտարման մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան

9. Գույքի օտարման մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
10. Դիլիջանի Աբովյան փողոցի թիվ 20/3 հասցեի 200.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
11. Դիլիջանի Մանթաշյան փողոցի թիվ 3/7 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 19.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
12. Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 88/4 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 27.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
13. Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 12/4 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 29.6քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
14. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1189.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի ներկայացնելու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
15. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Մոլդովական թաղամասին հարակից 33000քմ մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով «Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա» հիմնադրամին հատկացնելու, ինչպես նաև այդ հողամասի վրա գտնվող անավարտ շենք-շինությունները համայնքի կողմից որպես ներդրում հանձնելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 174

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՊԾ-ի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր , որի շրջանակներում պետք է կատարվի Դիլիջան քաղաքային համայնքի Մխիթարյան փողոցի հեղեղատարի վերանորոգման աշխատանքները: Դիլիջան քաղաքային համայնքի ներդրումը նշված ծրագրին պետք է կազմի 948900 դրամ ` նյութերի տեսքով:

Համայնքի մասնակցությունը ծրագրին ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել ծրագրով նշված շինարարական նյութերի գնում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և վերը նշված ծրագրին համայնքի ներդրումն ապահովելու նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ»/բաժին 4 , խումբ 5, դաս 1, հոդված 5113/ հատկացնել 948900 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 175

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2011թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հատկացում: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում»/բաժին 01 , խումբ 01, դաս 01/

- Հոդված 4214-169.6հազ.դրամ,որից IIIեռ.-25.6.հազ.դրամ, IVեռ.-144.0հազ.դրամ
- Հոդված 4823-32,9հազ.դրամ, որից IIIեռ.- 32,9հազ.դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 176

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Իվանովո փողոցի բնակիչները հայտնելով, որ Իվանովո փողոցի թիվ 35 հասցեի տան հարակից ճանապարհի ներքին հատվածի հենապատը մասամբ փլվել է և անհրաժեշտ է այն վերակառուցել:

Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված հենապատը տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, փլվածքները լցվել են փողոց, ինչը խոչընդոտ է առաջացնում ավտոտրանսպորտի և հետիոտնի անվտանգ երթևեկության համար:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում նշված վթարը վերացնելու նպատակով կատարել հենապատի վերակառուցման աշխատանքներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Իվանովո փողոցի թիվ 35 հասցեի տանը հարակից հենապատի վերակառուցում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04, խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 952875 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 177

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ենթակայության «Դիլիջանի Հովի. Շարամբեյանի անվ. գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար Դիլիջանի քաղաքապետարանի և «Կապդեվիլյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2011թ, մայիսի 20-ին կնքվել է պայմանագիր 7894424 դրամի չափով: Ըստ նախագծանախահաշվային փաստաթղթերի աշխատանքների կատարման ժամանակ ի հայտ են եկել սկզբնական պայմանագրում չներառված, սակայն չնախատեսված հանգամանքներից ելնելով սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած աշխատանքներ:Համայքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարելու լրացուցիչ գնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի Հովի. Շարամբեյանի անվ. գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման լրացուցիչ աշխատանքների գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 915153 դրամ «Արտադպրոցական դաստիարակություն»/բաժին 09 , խումբ 05, դաս 01/ հոդված 5113:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 178

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի Շամախյան թաղամասը ձմեռային սեզոնին նախապատրաստելու, ինչպես նաև ընդառաջ գնալով թաղամասի բնակիչների խնդրանքին, անհրաժեշտություն է առաջացել ավարտին հասցնել Շամախյան թաղամասի գազաֆիկացումը:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել իրականացնել գազաֆիկացման աշխատանքներ համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և « Դիլիջան քաղաքի Շամախյան թաղամասի Վ.Անանյանի փողոցի 1-ին նրբանցքի , Շամախյան փողոցի վերջնահատվածի, Վ.Անանյանի փողոցի, Շամախյան փողոցի 1-ին նրբանցքի, Այգեստան փողոցի և Այգեստան փողոցի 1-ին նրբանցքի գազաֆիկացման աշխատանքների» գնման համար Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 27251.0 հազ. դրամ «Նավթամթերք և բնական գազ» /.բաժին 04 խումբ 03 դաս 02 հոդված 5113/:

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 179

20 սեպտեմբեր 2011թ.

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշն ինկ» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը «Վաղ մանկության զարգացում» ծրագրի շրջանակներում նախադպրոցական տարիքի երեխաների կրթական և խնամքի ծառայությունների որակի բարելավման նպատակով, Դիլիջանի քաղաքապետարանի հետ համատեղ Դիլիջան քաղաքում իրականացրել է «Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (նախկինում թիվ 12 մանկապարտեզ) շենքի հիմնանորոգման աշխատանքներ: Աշխատանքների կատարման ժամանակ ի հայտ են եկել սկզբնական պայմանագրում չներառված, սակայն անհրաժեշտ դարձած աշխատանքներ:Համայքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել լրացուցիչ ներդրում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Վաղ մանկության զարգացում» ծրագրով նախատեսված «Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի հիմնանորոգման աշխատանքներին Դիլիջան քաղաքային համայնքի կողմից մնացած ներդրումն ապահովելու նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Նախադպրոցական կրթություն»/բաժին 09 , խումբ 01, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 1100000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 180

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

- Դիլիջանի քաղաքային համայնքի Շահումյան փողոցի թիվ 13 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 223-102 ծածկագրով հողում քաղ. Սամվել Գրիգորյանի կողմից կառուցվել է ինքնակամ շինություն ավտոտնակ՝ 26.0 քմ մակերեսով
- Դիլիջանի քաղաքային համայնքի Շամախյան փողոցի թիվ 3 ա շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 069-010 ծածկագրով հողում քաղ. Սուսաննա Գրիգորյանի կողմից կառուցվել է ինքնակամ շինություն ավտոտնակ՝ 32.7 քմ մակերեսով ;

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Ներքոնշյալ շինությունները ընդգրկել Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով.

- Դիլիջանի քաղաքային համայնքի Շահումյան փողոցի թիվ 13 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 223-102 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն ավտոտնակ՝ 26.0 քմ- 33800 դրամ
- Դիլիջանի քաղաքային համայնքի Շամախյան փողոցի թիվ 3 ա շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 069-010 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն ավտոտնակ՝ 32.7 քմ - 42510 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 181

20 սեպտեմբեր 2011թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Շահունյան փողոցի թիվ 12 շենքի թիվ 19 բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն հանայքի սեփականություն հանդիսացող Շահումյան 12 շենքի թիվ 19 մեկ սենյականոց՝ 26.6ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով 39900դրամով(մեկ քառ.մետրի համար սահմանելով 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԵՂԻՇԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 182

20 սեպտեմբեր 2011թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 2 բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող Հովսեփյան 83 շենքի թիվ 2 երեք սենյականոց՝86.5 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով , 129750դրամով(մեկ քառ.մետրի համար սահմանելով 1500դրամ)օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԵՂԻՇԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 183

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20/3
ՀԱՍՑԵԻ 200.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Վոլոդյա Ալիխանյանը, Աբովյան փողոցի թիվ 20/1 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան 380.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող /Աբովյան փողոց թիվ 20/3 հասցեի/ 200.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 200.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված բնակելի տան սեփականատեր Վոլոդյա Ալիխանյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Աբովյան փողոցի թիվ 20/3 հասցեի 200.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 248400 դրամ արժեքով օտարել քաղ. Վոլոդյա Ալիխանյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Աբովյան փողոց թիվ 20/3 հասցեի 200.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 248400 դրամ արժեքով, քաղ. Վոլոդյա Ալիխանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 184

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՆԹԱՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3/7
ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 19.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Սևան Պետրոսյանի կողմից Մանթաշյան փողոցի թիվ 3/7 հասցեում ինքնակամ կառուցված 19.0քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. օգոստոսի 24-ի թիվ 515 որոշմամբ նշված ինքնակամ կառուցված ավտոտնակը ճանաչվել է օրինական: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 19.0քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 19.0քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Սևան Պետրոսյանին, համապատասխանաբար, 24700 դրամ և 23598 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Մանթաշյան փողոցի թիվ 3/7 հասցեում գտնվող 19.0քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 19.0քմ հողամասը, համապատասխանաբար, 24700 դրամ և 23598 դրամ արժեքներով, քաղ. Սևան Պետրոսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 185

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 88/4
ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 27.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Անաստաս Ղուկասյանի կողմից Գետափնյա փողոցի թիվ 88/4 հասցեում ինքնակամ կառուցված 27.0քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 5-ի թիվ 536 որոշմամբ նշված ինքնակամ կառուցված ավտոտնակը ճանաչվել է օրինական: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 27.0քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 27.0քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Անաստաս Ղուկասյանին, համապատասխանաբար, 45900 դրամ և 51678 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Գետափնյա փողոցի թիվ 88/4 հասցեում գտնվող 27.0քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 27.0քմ հողամասը, համապատասխանաբար, 45900 դրամ և 51678 դրամ արժեքներով, քաղ. Անաստաս Ղուկասյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 186

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12/4
ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 29.6ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Ալվարդ Դավթյանի կողմից Գետափնյա փողոցի թիվ 12/4 հասցեում ինքնակամ կառուցված 29.6քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 15-ի թիվ 554 որոշմամբ նշված ինքնակամ կառուցված ավտոտնակը ճանաչվել է օրինական: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 29.6քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 29.6քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Ալվարդ Դավթյանին, համապատասխանաբար, 50320 դրամ և 56655 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Գետափնյա փողոցի թիվ 12/4 հասցեում գտնվող 29.6քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 29.6քմ հողամասը, համապատասխանաբար, 50320 դրամ և 56655 դրամ արժեքներով, քաղ. Ալվարդ Դավթյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 187

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ»
1189.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ
3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ
ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 17-ի թիվ 559 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1189.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը հետևյալ աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով աճուրդի ներկայացնելու մասին հարցը.
1. Լոտ 38/ՔՀ-11/ - Արցախի փողոց I նրբ. թիվ 34, 600.0քմ, ծածկագիրը՝ 086-037, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1500000 դրամ,
2. Լոտ 39/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց I նրբ. թիվ 3/1, 449.0քմ, ծածկագիրը՝ 053-376, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ բնակելի կառուցապատման, հողամասի մեկնարկային գինը՝ 1122500 դրամ,
3. Լոտ 40/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 49, 140.0քմ, ծածկագիրը՝ 075-021, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 350000 դրամ:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հողամասերը հետևյալ աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով աճուրդի ներկայացնելու հարցին և հաստատել հետևյալ մեկնարկային գները.
1. Լոտ 38/ՔՀ-11/ - Արցախի փողոց I նրբ. թիվ 34, 600.0քմ, ծածկագիրը՝ 086-037, ըստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 188

20 սեպտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻՆ ՀԱՐԱԿԻՑ
33000 ՔՄ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ԱԶԳԱՅԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ԱՍՈՑԻԱՑԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ
ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՎԱՐՏ ՇԵՆՔ
-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ
ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Սոցիալական Բնակարանային Հիմնադրամի և Ազգային Սոցիալական Բնակարանային Ասոցիացիայի (ԱՍԲԱ) նախաձեռնությամբ սոցիալական բնակարանների կառուցապատման նպատակով Դիլիջան քաղաքի Մոլդովական թաղամասին հարակից 33000քմ. մակերեսով ք. Դիլիջան Մոլդովական7/1 հասցեի հողամասը ուղղակի վաճառքով 40986000 /քառասուն միլիոն ինը հարյուր ութսունվեց հազար/ դրամ արժեքով Ազգային Սոցիալական Բնակարանային Ասոցիացիա հիմնադրամին հատկացնելու, ինչպես նաև այդ հողամասի վրա գտնվող անավարտ շենք -շինությունները (շուկայական արժեքը՝ 61910000 /վաթսունմեկ միլիոն ինը հարյուր տաս հազար/ դրամ) համայնքի կողմից որպես ներդրում հանձնելու մասին հարցը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սոցիալական Բնակարանային Հիմնադրամի և Ազգային Սոցիալական Բնակարանային Ասոցիացիայի (ԱՍԲԱ) նախաձեռնությամբ սոցիալական բնակարանների կառուցապատման նպատակով Դիլիջան քաղաքի Մոլդովական թաղամասին հարակից 33000քմ. մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով՝ 40986000 /քառասուն միլիոն ինը հարյուր ութսունվեց հազար/ դրամ արժեքով հատկացնել Ազգային